ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 02.05.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԷՍ-2018/26

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհրդուրդը (այսուհետ՝ նաև Խորհուրդ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 13.03.2018թ. թիվ 04/26-3/4438-18 գրությամբ «ՓԻՆՔ ՖԼԱՄԻՆԳՈ Գ. և Ա. ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 06.03.2018թ. թիվ ԴՎԱ/806 գրության հիման վրա, 13.03.2018թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է «ՓԻՆՔ ՖԼԱՄԻՆԳՈ Գ. և Ա. ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

ՀՀ ֆինանսների նախարարությունը պատշաճ ծանուցվել է Խորհրդում անցկացվող նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

2. ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարությունը 06.03.2018թ. թիվ ԴՎԱ/806 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և «ՓԻՆՔ ՖԼԱՄԻՆԳՈ Գ. և Ա. ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ-ի միջև 26.04.2017թ. կնքված N ՇՀԱՊՁԲ-9/5-4 ծածկագրով գնման պայմանագրի 3.1.7 կետը, 3.1.7.1 կետի «բ» ենթակետը, ՀՀ պաշտպանության նախարարությունը 2018թ. փետրվարի 26-ից միակողմանի ամբողջությամբ լուծել է վերը նշված պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ վերոնշյալ պայմանագրի լուծման վերաբերյալ գրությունը 05.03.2018թ. ուղարկվել է մասնակցի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և հրապարակվել է www.gnumner.am կայքում»:

Պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով Խորհրդում տեղի ունեցած նիստերին մասնակցում էր ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչ Նորայր Հարությունյանը:

2. «ՓԻՆՔ ՖԼԱՄԻՆԳՈ Գ. և Ա. ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«ՓԻՆՔ ՖԼԱՄԻՆԳՈ Գ. և Ա. ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ-ն 30.03.2018թ. գրությամբ Խորհրդին է ներկայացրել գրավոր դիրքորոշում, որով հայտնել է.

«Հայտնում ենք, որ «ՓԻՆՔ ՖԼԱՄԻՆԳՈ Գ. և Ա. ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը բացակայում են հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «ՓԻՆՔ ՖԼԱՄԻՆԳՈ Գ. և Ա. ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) միջև 26.04.2017թ. կնքվել է «ՇՀԱՊՁԲ-9/5-4» ծածկագրով ապրանքի մատակարարման գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

ՀՀ պաշտպանության նախարարության և «ՓԻՆՔ ՖԼԱՄԻՆԳՈ Գ. և Ա. ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ-ի միջև 26.04.2017թ. կնքված N ՇՀԱՊՁԲ-9/5-4 ծածկագրով ապրանքի մատակարարման գնման պայմանագիր 1.1 կետի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է նույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում (Հավելված 2), Պատվիրատուին կամ նրա կողմից որոշված ստացողին մատակարարել նույն պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքները (այսուհետ՝ ապրանք), իսկ Պատվիրատուն պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Ընկերությունը էականորեն խախտել է Պայմանագիրը:

Պայմանագրի 3.1.7.1 կետի համաձայն՝ Ընկերության կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Պատվիրատուի համար ընդունելի ժամկետում,

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

Պայմանագրի 3.3.4 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Ընկերությունը էականորեն խախտել է Պայմանագիրը:

Պայմանագրի 3.4.2 կետով սահմանվել է, որ Պայամանագրի 2.2 կետին համապատասխան Ընկերությունը պարտավոր է ապրանքը Պատվիրատուին մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

Պայմանագրի թիվ 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով, սահմանվել է, որ Ընկերությունը Պայմանագրի 1-ին չափաբաժնով նախատեսված ապրանքը «Վիրահատական լամպ շարժական LED տեսակի լուսարձակներով» պետք է մատակարարի 2017թ. IV եռամսյակում, բայց ոչ ուշ քան 30.11.2017թ.-ին:

Պայմանագրի 6.3 կետի համաձայն՝ հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված Ապրանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում:

Պայմանագրի 6.4 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից հինգօրյա ժամկետում Ընկերությանն է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակ կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

Պայմանագրի 6.5 կետի համաձայն՝ եթե Պատվիրատուն Պայմանագրի 6.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում Պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված:

Այսպիսով, Ընկերության կողմից Պայմանագրով սահմանված ժամկետում և կարգով Պատվիրատուին է մատակարարվել Պայմանագրի 1-ին չափաբաժնով նախատեսված ապրանքը «Վիրահատական լամպ շարժական LED տեսակի լուսարձակներով», ինչը ընդունվել է Պատվիրատուի կողմից, որը հաստատվում է երկկողմանի հաստատված 22 նոյեմբերի 2017թ. Թիվ 6682591045 հաշիվ ապրանքագրով, ինչպես նաև տրանսպորտային միջոցների և փաստաթղթերի ստուգման ժամանակ կազմված ակտով, որի 5-րդ կետի համաձայն՝ որակի ստուգումից պարզվել է, որ ակտում նշված նյութական միջոցների քանակական վիճակը համապատասխանում է պայմանագրում և հանձայնագրում նշված տեխնիկական բնութագրին: Բացի այդ ցանկանում ենք վկայակոչել նաև 23.11.2017թ. կրկին երկկողմանի հաստատված ի պահ ընդունման ակտը, որով կրկին հավաստվում է, որ Ընկերությունը պատշաճ կերպով մատակարարել է Պայմանագրով սահմանված ապրանքը, ինչն ընդունվել է Պատվիրատուի կողմից:

Գտնում ենք, որ Պատվիրատուն 2018թ. փետրվարի 26-ին միակողմանի լուծելով Պայմանագիրը, գործել է ոչ օրինաչափ, ինչը հակասում է թե՛ գնումների մասին ՀՀ օրեսդրությամբ սահմանված պահանջներին, թե՛ Պայմանագրով սահմանված դրույթներին:

Այսպիսով՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերության կողմից պատշաճ կատարվել է Պայմանագրով ստանձնած պարատավորությունները և «ՓԻՆՔ ՖԼԱՄԻՆԳՈ Գ. և Ա. ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ-ն ոչ մի խախտում թույլ չի տվել, ուստի խնդրում ենք «ՓԻՆՔ ՖԼԱՄԻՆԳՈ Գ. և Ա. ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում չներառել և ՀՀ բողոքարկման խորհրդի ՍՑ-ԷՍ-2018/26 ծածկագրով նախաձեռնած պաշտոնական ընթացակարգը մերժել:»:

Պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով Խորհրդում տեղի ունեցած նիստերին մասնակցում էր «ՓԻՆՔ ՖԼԱՄԻՆԳՈ Գ. և Ա. ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Լարիսա Հովակիմյանը:

3. Ս Ց-ԷՍ-2018/26 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.

Խորհուրդն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 13.03.2018թ. թիվ 04/26-3/4438-18 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 06.03.2018թ. թիվ ԴՎԱ/806 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության և «ՓԻՆՔ ՖԼԱՄԻՆԳՈ Գ. և Ա. ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ-ի միջև 26.04.2017թ. կնքված N ՇՀԱՊՁԲ-9/5-4 ծածկագրով գնման պայմանագիրը, Պատվիրատուի՝ «ՓԻՆՔ ՖԼԱՄԻՆԳՈ Գ. և Ա. ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ-ին ուղղված 02.03.2017թ. թիվ ԴՎԱ/765 գրությունը, «ՓԻՆՔ ՖԼԱՄԻՆԳՈ Գ. և Ա. ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ-ի կողմից 14.12.2017թ. ՀՀ ՊՆ ԶՈՒ Ռազմաբժշկական վարչության պետին ուղղված թիվ 12/21 դիմումը, ՀՀ պաշտպանության նախարարին 22.12.2017թ. ուղղված զեկուցագիրը, 08.12.2017թ. թիվ 1 արձանագրությունը, 23.11.2017թ. երկկողմանի հաստատված ի պահ ընդունման ակտը, ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետի պժկ-ին 22.02.2018թ. ուղղված զեկուցագիրը.

ՀՀ պաշտպանության նախարարության և «ՓԻՆՔ ՖԼԱՄԻՆԳՈ Գ. և Ա. ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ-ի միջև 26.04.2017թ. կնքվել է N ՇՀԱՊՁԲ-9/5-4 ծածկագրով գնման պայմանագիր (այսուհետ՝ նաև Պայմանագիր):

Պայմանագրի՝

- 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է նույն պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված N2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակակարել Պայմանագրի N1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքները (այսուհետ՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար (հավելված N3) :

- 3.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:
- 3.1.7.1 կետի բ) ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:
- 6.1 կետի համաձայն՝ Վաճառողն Ապրանքը հանձնում է Գնորդին Պայմանագրի թիվ 2 հավելվածում նշված ծավալներով և ժամկետներում:
- 6.2 կետի համաձայն՝ Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ավարտի օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է ներկայացնում մատակարարված ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման 2 օրինակ (Հավելված N 4) և Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 4.1):

- 6.3 կետի համաձայն՝ հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված Ապրանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցներ:

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

- 6.4 կետի համաձայն՝ Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից հինգօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակ կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:
- 6.5 կետի համաձայն՝ եթե Գնորդը Պայմանագրի 6.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում Պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է

ընդունված և Պայմանագրի 6.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

Պայմանագրի Հավելված 1-ով «Վիրահատական լամպ շարժական LED տեսակի լուսարձակներով» ապրանքատեսակի համար սահմանվել են հետևյալ տեխնիկական հատկանիշները՝ շարժական վիրահատական լույս կազմված 2 մասից-ակներով և ամրակով, LED տիպի, LED-երի քանակը յուրաքանչյուր աղբյուրում ոչ պակաս քան 7, լույսի ինտենսիվությունը ոչ պակաս քան 5000 LUX, լույսի ջերմաստիճանը 4800±300k, թևի երկարությունը ոչ պակաս քան 85սմ, LED լամպի կյանքի տևողությունը՝ ոչ պակաս 5000ժամ, արտադրությունը՝ «Shangai Huifeng Medical Instrument Co. LTD», երկիրը՝ ՉԺՀ:

Պայմանագրի Հավելված 2-ով նախատեսված գնման ժամանակացույցի համաձայն՝ «ՓԻՆՔ ՖԼԱՄԻՆԳՈ Գ. և Ա. ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ-ն պարտավորվել է 2017թ. չորրորդ եռամսյակում, բայց ոչ ուշ քան 30.11.2017թ. մատակարարել «Վիրահատական լամպ շարժական LED տեսակի լուսարձակներով» (3 հավաքածու):

08.12.2017թ. թիվ 1 արձանագրության համաձայն, որը ստորագրվել է ՀՀ ԶՈՒ ՌԲՎ պետ, փոխգնդապետ Գ հովհաննիսյանի, ՀՀ ՊՆ 73014 զ/մ-ի հրամանատարի տեղակալ բ/ծ մայոր Լ. Աթաբեկյանի և ֆինանսական բաժնի պետ, կապիտան Դ. Թորոսյանի, ՀՀ ԶՈՒ ՌԲՎ մատակարարման բաժնի ավագ սպա, բ/ծ ավագ լեյտենանտ Բ. Դիլանյանի կողմից, արձանագրվել է հետևյալը.

«23.11.2017թ. «ՓԻՆՔ ՖԼԱՄԻՆԳՈ Գ և Ա ԿԵՆՏՐԵՆ» ՍՊԸ-ի կողմից Բ6682591045 հարկային հաշվով (26.04.2017թ. կնքված ՇՀԱՊԶԲ-9/5-4 պայմանագիր) ՀՀ ՊՆ 73014 զորամաս մատակարավել է.

- Վիրահատական լամպ շարժական LED տեսակի լուսարձակներով՝ 3 հատ:

Հանձնաժողովը, իրականացնելով համապատասխան ստուգում, պարզել է, որ վերը նշված ապրանքատեսակը չի համապատասխանում պայմանագրի տեխնիկական բնութագրի պահանջներին, մասնավորապես, որպես արտադրող երկիր նախատեսված ՉԺՀ-ի «Shangai Huifeng Medical Instrument Co. LTD» ֆիրմայի փոխարեն մատակարավել է Հնդկաստանի «Asco medical» ֆիրմայի արտադրության լամպ:

Ելնելով վերոհիշյալից, վերը նշված ապրանքատեսակը ետ է վերադարձվում մատակարարին:»:

«ՓԻՆՔ ՖԼԱՄԻՆԳՈ Գ. և Ա. ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ-ն 14.12.2017թ. N 12/21 դիմումով դիմել է ՀՀ ՊՆ ԶՈՒ Ռազմաբժշկական վարչության պետին հայտնելով հետևյալը.

«N ՇՀԱՊՁԲ-9/5-4 պայմանագրի շրջանակներում 15.08.2017թ. N 12/17 դիմումով դիմել էինք ՀՀ պաշտպանության նախարար պարոն Վ. Սարգսյանին՝ ստանալու թույլտվություն, N ՇՀԱՊՁԲ-9/5-4 պայմանագրով մատակարարել լամպեր, որոնց տեխնիկական բնութագիրը համապատասխանում է մրցույթի հայտարարությունում նշված ձեռք բերման ենթակա ապրանքի տեխնիկական բնութագրին, որը հետևյալն է՝ «Շարժական վիրահատական լույս պոլիկարբոնատից, կազմված 2 մասից՝ ակներով և ամրակով, LED տիպի, LED-երի քանակը յուրաքանչյուր աղբյուրում ոչ պակաս քան 7, լույսի ինտենսիվությունը ոչ պակաս քան 15.000, լույսի ջերմաստիճանը 4500k: Թևերի երկարությունը ոչ պակաս քան 85սմ:»

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ պետի Կ. Կարապետյանի կողմից 23.09.2017թ. թիվ ԴՎԱ/3183 գրությամբ ստացել ենք պատասխան, որ ՀՀ պաշտպանության նախարարության ղեկավարությունը չի առարկում: Մենք մատակարարել ենք լամպեր, որոնց տեխնիկական բնութագրերը համապատասխանում են մրցույթի հայտարարությունում նշված բնութագրին: Լրացուցիչ հայտնում ենք, որ մեր կողմից մատակարավող լամպերի արտադրող երկիրը հանդիսանում է Հնդկաստանը, իսկ արտաընկերությունը «Asco medical» LTD-ն: Հայտնում եմ նաև, որ մեր ընկերությունը կատարում է լամպերի գնի նվազեցում: Միավոր գինը նվազեցնում է 220.000 ՀՀ դրամով: Երեք լամպերի համար ընդհանուր նվազեցման գումարը կկազմի 660.000 ՀՀ դրամ ի օգուտ ՀՀ պաշտպանության նախարարության:»:

ՀՀ ՊՆ ԶՈՒ Ռազմաբժշկական վարչության պետ 22.12.2017թ. զեկուցագրով ՀՀ պաշտպանության նախարարին հայտնել է հետևյալը.

«ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչություն է դիմել «ՓԻՆՔ ՖԼԱՄԻՆԳՈ Գ և Ա ԿԵՆՏՐԵՆ» ՍՊԸ-ի տնօրեն Մ. Բաղդասարյանը, հայտնելով, որ համաձայն ՀՀ ՊՆ ՆՏԱԴ և «ՓԻՆՔ ՖԼԱՄԻՆԳՈ Գ և Ա ԿԵՆՏՐԵՆ» ՍՊԸ-ի միջև կնքված N ՇՀԱՊՁԲ-9/5-4 պայմանագրի շրջանակներում կազմակերպությունը պարտավորվել է սույն թվականի չորրորդ եռամսյակում մատակարարել «Վիրահատական լամպ շարժական LED տեսակի լուսարձակներով» 3 հատ ընդհանուր քանակությամբ և 1.500.000 ՀՀ դրամ ընդհանուր

արժողությամբ: Մատակարարման ժամանակ պարզվել է, որ մատակարարված ապրանքատեսակի տեխնիկական տվյալները տարբերվում են պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրից՝ մասնավորապես չի համապատասխանել լույսի ջերմությունը: Նշվածից հետո կազմակերպության տնօրենը դիմել է ՀՀ պաշտպանության նախարարությանը՝ մրցույթի հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին համապատասխանող լույսեր մատակարարելու համար ստացել է համապատասխան թույլտվություն: Մատակարարման ժամանակ պարզվել է, որ մատակարարված լույսերի արտադրող գործարանը և երկիրը չեն համապատասխանում պայմանագրով սահմանված արտադրող գործարանին և երկրին, մասնավորապես պայմանագրում նշված է «Shangai Huifeng Medical Instrument Co. LTD», երկիրը՝ ՉԺՀ, իսկ մատակարարվել են «Asco medical», երկիրը՝ Հնդկաստան:

Հաշվի առնելով վերոգրյալը կազմակերպությունը դիմել է ՀՀ Զու ռազմաբժշկական վարչություն՝ թույլատրել մատակարարել «Asco medical» ընկերության կողմից արտադրվող վիրահատական լույսերը՝ պայմանաով, որ կհրաժարվի 660.000 ՀՀ դրամ գումարից ի օգուտ ՀՀ պաշտպանության նախարարության:»

ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԹԱ վարչության պետը 22.02.2018թ. ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետի պժկ-ին ներկայացված զեկուցագրով հայտնել է հետևյալը.

«Հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարի 21.12.2017թ. հանձնարարականը և N ՇՀԱՊՁԲ-9/5-4 պայմանագրի 3.1.7.1 կետի «բ» ենթակետի պահանջները, խնդրում եմ Ձեր հանձնարարականը ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԳՓՁ վարչության, 31.12.2017թ. դրությամբ, «ՓԻՆՔ ՖԼԱՄԻՆԳՈ Գ. և Ա. ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ-ի հետ կնքված N ՇՀԱՊՁԲ-9/5-4 պայմանագիրը ամբողջությամբ միակողմանի լուծելու վերաբերյալ:»:

ՀՀ պաշտպանության նախարարությունը 02.03.2017թ. թիվ ԴՎԱ/765 գրությամբ «ՓԻՆՔ ՖԼԱՄԻՆԳՈ Գ. և Ա. ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ-ին հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության և «ՓԻՆՔ ՖԼԱՄԻՆԳՈ Գ. և Ա. ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ-ի միջև 26.042017թ. կնքված N ՇՀԱՊՁԲ-9/5-4 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) համաձայն, Ձեր ընկերությունը պարտավոր էր ՀՀ պաշտպանության նախարարությանը 2017թ. մինչև 30.11.2017թ. մատակարարել երեք հավաքածու

«Վիրահատական լամպ շարժական LED տեսակի լուսարձակներով»՝ 1,500.000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ ընդհանուր գնով:

Հիմք ընդունելով վերը նշված պայմանագրի 3.1.7. կետը, 3.1.7.1 «բ» ենթակետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2017թ. փետրվարի 26-ին միակողմանի ամբողջությամբ լուծում է N ՇՀԱՊՁԲ-9/5-4 ծածկագրով պայմանագիրը:

Տեղեկացնում եմ, որ «ՓԻՆՔ ՖԼԱՄԻՆԳՈ Գ. և Ա. ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 23,250 (քսաներեք հազար երկու հարյուր հիսուն) ՀՀ դրամ՝ մատակարարման ժամկետների խախտման համար (պայմանագրի 7.2 կետի համաձայն) և 7,500 (յոթ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ՝ պայմանագրի տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու համար (պայմանագրի 7.4 կետի համաձայն):

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ «ՓԻՆՔ ՖԼԱՄԻՆԳՈ Գ. և Ա. ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ-ից կգանձվի նաև վերը նշված պայմանագրի կատարման ապահովման գումարը, որը կազմում է 150,000 (հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:»:

Պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով Խորհրդում կայացած նիստի ժամանակ Ընկերության ներկայացուցիչը հատնեց, որ Ընկերության կողմից Պայմանագրով սահմանված ժամկետում և կարգով Պատվիրատուին է մատակարարվել Պայմանագրի 1-ին չափաբաժնով նախատեսված ապրանքը «Վիրահատական լամպ շարժական LED տեսակի լուսարձակներով», ինչը ընդունվել է Պատվիրատուի կողմից, որը հաստատվել է երկողմանի հաստատված 22 նոյեմբերի 2017թ. Թիվ 6682591045 հաշիվ ապրանքագրով՝ միաժամանակ վկայակոչելով նաև 23.11.2017թ. երկկողմանի հաստատված ի պահ ընդունման ակտը, որով կրկին հավաստվել է, որ Ընկերությունը պատշաճ կերպով մատակարարել է Պայմանագրով սահմանված ապրանքը, ինչն ընդունվել է Պատվիրատուի կողմից:

Խորհրդի այն հարցին թե արդյո՞ք Պատվիրատուին ներկայացվել է հանձնմա-ընդունման ակտ, ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչը հանյտնեց, որ Ընկերության կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտ չի ներկայացվել, ինչպես նաև հավելեց նաև, որ մատակարարված «Վիրահատական լամպ շարժական LED տեսակի լուսարձակներով» ապրանքատեսակը չի համապատասխանել պայմանագրի տեխնիկական

բնութագրի պահանջներին, մասնավորապես՝ Պայմանագրով նախատեսված մատակարարման ենթակա ապրանքը պետք է լիներ «Shangai Huifeng Medical Instrument Co. LTD», երկիրը՝ ՉԺՀ, մինչդեռ մատակարարվել է «Asco medical», ապրանքը, երկիրը՝ Հնդկաստան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Խորհուրդն արձանագրում է, որ.

- «ՓԻՆՔ ՖԼԱՄԻՆԳՈ Գ. և Ա. ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ-ի կողմից մատակարարված ապրանքի տեխնիկական հատկանիշները տարբերվում են Պայմանագրով սահմանված մատակարարման ենթակա ապրանքի տեխնիկական բնութագրով նախատեսված տեխնիկական հատկանիշներց:
- Պայմանագրի տեխնիկական բնութագրով սահմանված է՝ արտադրությունը «Shangai Huifeng Medical Instrument Co. LTD» ֆիրմայի ապրանքատեսակ, երկիրը՝ ՉԺՀ, մինչդեռ մատակարարվել են «Asco medical» ֆիրմայի ապրանքատեսակ, երկիրը՝ Հնդկաստան:
- Մատակարարված Ապրանքի վերաբերյալ Ընկերության կողմից հանձնման-ընունման ակտ չի ներկայացվել և այն կողմերի չի ստորագրվել:
- Ի պահ ընդունման ակտը Ընկերության կողմից ներկայացվել է 23.11.2017թ., որից հետո 14.12.2017թ. N 12/21 դիմումով «ՓԻՆՔ ՖԼԱՄԻՆԳՈ Գ. և Ա. ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ-ն դիմել է ՀՀ ՋՈՒ Ռազմաբժկական վարչության պետին ստանալու թույլատվություն մատակարարել լամպեր հետևյալ բնութագրով՝ «Շարժական վիրահատական լույս պոլիկարբոնատից, կազմված 2 մասից՝ ակներով և ամրակով, LED տիպի, LED-երի քանակը յուրաքանչյուր աղբյուրում ոչ պակաս քան 7, լույսի ինտենսիվությունը ոչ պակաս քան 15.000, լույսի ջերմաստիճանը 4500k: Թևերի երկարությունը ոչ պակաս քան 85սմ:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ «ՓԻՆՔ ՖԼԱՄԻՆԳՈ Գ. և Ա. ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ-ի կողմից մատակարարված ապրանքը չի համապատասխանում Պայմանագրով

նախատեսված մատակարարման ենթակա ապրանքի տեխնիկական բնութագրով սահմանված պահանջներին:

Խորհուրդը գտնում է, որ «ՓԻՆՔ ՖԼԱՄԻՆԳՈ Գ. և Ա. ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ-ն խախտել է 26.04.2017թ. կնքված N ՇՀԱՊՁԲ-9/5-4 գնման պայմանագրի 1.1 կետով ստանձնած պարտավորությունը, ինչը հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծմանը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ «ՓԻՆՔ ՖԼԱՄԻՆԳՈ Գ. և Ա. ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ-ն գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Խորհրդին ներկայացված պաշտոնական ընթացակարգով առկա չէ որևէ տեղեկատվություն կամ ապացույց այն մասին, որ Ընկերությունը հայտը ներկայացնելու նախորդող տարվա ընթացքում թույլ է տվել Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված որևէ խախտում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ «ՓԻՆՔ ՖԼԱՄԻՆԳՈ Գ. և Ա. ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով, 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 13.03.2017թ. «ՓԻՆՔ ՖԼԱՄԻՆԳՈ Գ. և Ա. ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ